ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԻ ԴԷՄ

Գրեց՝ Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ա.

ARMENIS DEVICTIS

Հայաստանը գտայ Հռոմում. իմ խիզախ, իմ կորովի եւ ողբերգու հայրենիքը:

Անակնկալ չէր այս ինձ համար: Հին Հռոմը աշխարհագրութիւն դիտէր եւ սիրում էր պատմութիւն կերտել շատ հեռաւոր հորիզոնների տակ: Հայաստան նրան անծանօթ չմնաց, ինչպէս եւ Մեծաւոր Արեւելքի շատ ուրիշ երկիրներ:

Հայաստանը տեսայ Մարկոս Աւրելիոսի յաղթական սիւնի վրայ: Եւ ահա «էսքիզներ»իս*) այս վերջին գլուխը նուիրում եմ մեր աշխարհի հին ու նոր, շար ու բարուն:

Ահա երկու շաբաթից ի վեր է, որ դառնում եմ այս կախարդական քաղաքում, քայլերս ինձ դրեթէ մեքենայաբար առաջնորդում են դէպի Piazza Colonna հրապարակը, ուր 176 (Ք. յ.) թուից ի վեր բարձրանում է Մարկոս Աւրելիոսի յաղթական սիւնը իր հօր՝ Անտոնիոս Պիոսի յիշատակին նուիրած: Հռոմէական Սենատը կանգնեցրեց այն՝ յաւերժացնելու համար փիլիսոփայ կայսեր փառքը եւ իր հոգեւոր հօր յիշատակը: Քսան եւ վեց մէթր բարձրութիւն ունի այս մարմարակերտ սիւնը ու նրա վրայ օձապտոյտ բարձրաքանդակներով ձգւում են վեր Մարկոս Աւրելիոսի յաղթութիւնների պատկերները: Կատարին կայսեր արձանն է եղած սկզբում, որ Սիքքստոս Ե. Պապը վար առաւ ու նրա փոխարէն կանգնեցրեց այնտեղ Ս. Պողոսի անդրին:

Այս կոթողի արուեստը նոյնն է՝ ինչ որ բոլոր նման կառուցուածքներինը Հռոմում — թանձրութիւն, նազանքի պակաս ու ճաշակի խստութիւն: Ինձ գրաւողը սակայն ինքն այս սիւնը չէ՝ որքան նրա պատուանդանի վրայ խոշոր լատինական տառերով փորագրուած արձանագրութիւնը՝ հայ ու Հայաստանի յիշատակութիւնով.—

M. AVRELIUS IMP.
Armenis, Parthis, Germanis,
Q, Bello Maximo devictic
Triumphalem Hanc colomnam
Rebus gestis insignem Imp.
Antonio Pio patri dedicaviti.

Որ նշանակում է մօտաւորապէս հետեւեալը.—

«Մարկոս Աւրելիոս իմպերատոր դերագոյն պատերազմի մէջ յաղթելով հայերին, պարթեւներին, գերմաններին այս յաղթական սիւնը՝ փառաբանութիւն իր կատարած գործերի նուիրեց իր հօր Անտոնիոս Պիոս իմպերատորին»:

Armenis!...

Ի՜նչ ահաւոր անդունդ է մարդկային հոգին իր գաղտնածածուկ ու մեզ անյայտ խղձերով, որոնք անակնկալ կերպով յանկարծ փայլատակում են մեր ներքին խաւարի վրայ, որպէս մռայլ երկինքն ակօսող շանթեր: Եւ ի՜նչ դժբախտ, նա, այդ հոգին, որ յաճախ լռելեան գալարւում է մի մութ մորմոքիչ ցաւից, որ մենք վաղուց հետէ մաշուած, ամոքուած կարծելով ժպտում ենք աշխարհին, կեանքին: Դժբախտ ու հզօր միաժամանակ, քանի որ մեզնից ծածուկ եւ մեզնից անկախ՝ նա մեր ներքին աշխարհի տէրն է ու վարիչը. աղբիւրը մեր մտածումների, իշխողը մեր կամքին, որ աւա՜ղ թշուառօրէն ազատ ու անկախ ենք համարում: Նա ճամբաներ ունի մեզ օտար ու անծանօթ, որոնցով գնում ենք հնազանդօրէն՝ հակառակ մեր կամքին, ու երբ անցնում ենք նրա քառուղիներով, զարմանքով ենք լսում մեր քով ոտնաձայնների զրնգոցը —

*) Այս յօդուածաշարքը «Իտալական էսքիզներ»ուն վերջին գլուխը կը կազմէ, զոր յարմար դատեցինք հրատարակել առանձին լերնագրի տակ: Ծ. «Հ».ի